ARMENIAN VIRTUAL COLLEGE AGBU AVC ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Армянский Колледж

Учитесь говорить на АРМЯНСКОМ языке

+7 904 506 91 28

Запущен официальный сайт аудиокниг на армянском языке «Аск»



14 мая 2013 г. был запущен официальный сайт аудиокниг на армянском языке «Аск» – http://www.askaudiobooks.am/. Благодаря этой инициативе древнейшие ценности удалось совместить с новейшими технологиями.

Армянские аудиокниги представлены на восточноармянском и западноармянском. Составляются аудиопутеводители и аудиокурсы, оказываются также услуги по аудиозаписи.

Соучредителями сайта «Аск» являются Мариам Дилбандян и Артак Бегларян. Аудиокниги читают Гарегин Эвоян, священник Геворк Алавердян, Мариам Дилбандян и др.

Помощь в деле реализации идеи оказали общественная организация содействия прессе «Интерньюс», научно–культурная общественная организация инвалидов «Форте», второй призер конкурса Armenia StartUp Cup.

Большинство книг армянских классиков открыты для общественности. Это произведения М. Хоренаци, Ал. Ширванзаде, Нар–Доса, А. Бакунца, Г. Матевосяна, В. Сарояна, К. Агаяна. Бесплатны и некоторые сказки.

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ

Չ չ

ՉՂՋԻԿՆԸ

Չղջիկի դունչը սիրուն
Ես չեմ տեսել երբևէ:
Անհնար է չղջիկին
Թռիչքի մեջ հետևել:
Այնքան արագ է թռչում,
Ստվեր է ասես.
Առկայծում է ու չկա՝
Չքված տիրոջ պես:

Պ պ

ՊԱՂՊԱՂԱԿԻ ԱՂԱՂԱԿԸ

Պաղպաղակի աղաղակը
Ոչ մի փոքրիկ չի լսում:
Խփշտում է ագահությամբ
Հարավում, թե հյուսիսում:

- Պաղ եմ, պաղ եմ, պաղ եմ անչափ,
Ինձ մի կերեք այդքան պաղ:
Հիվանդանաք՝ բժիշկ պիտի
Հրավիրեք անհապաղ:

Ջ ջ

ՋՐԱՂԱՑԸ

Ջրաղացը ջրին նստած
Ջադու չէ, բայց պառավ է:
Հազար տարի ուտում-խմում,
Էլի սոված-ծարավ է…

Рубрику ведет преподаватель армянского языка Армине Варданян

Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից

Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը

КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМАВОНЯН



Кроссворд № 25

По направлениям стрелок:
1. Изюм.
2. Китаец.
3. Сколько.
4. Чинара.



Кроссворд № 26

По вертикали:
1. Свободный, пустой.
2. Верёвка. 3. Хореография.

По горизонтали:
4. Сыр.



Кроссворд № 27

По направлениям стрелок:
1. Температура, теплота.
2. Апельсин. 3. Строчка.

По вертикали: 1. Вода. 4. Люстра.
По горизонтали: 5. Название горы.

Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симавонян

Օրերի հետ

Վիճակն անհանգստացնող է, բայց ոչ… խուճապային

Հայերիս որոշ մասի մեջ տարօրինակ զգացում կա՝ Հայաստանը փոքր երկիր համարել, հայերիս էլ սակավաթիվ հռչակել: Անշուշտ, տողերիս հեղինակն էլ դեմ չէ իր հայրենին 300 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, բնակչությունն էլ երկնիշ միլիոններով տեսնել: Վստահ եմ՝ մի օր կունենանք այդ երկիրը: Հարց է այն, թե այսօր ինչ ենք անում երազ երկրին հասնելու ժամանակը հնարավորինս մոտեցնելու առումով:

Մերօրյա հայը այսօրինակ մտորումների մշտապես է տրվում, փորձում մեր առջև ծագող խնդիրների կանխման ու լուծման միջոցով նաև կանխատեսելի դարձնել առաջիկան: Մայիսյան եռատոնի օրերին էլ մտահոգություններն իրենց արտահայտությունը գտան, որին ակտիվորեն հետևում էին արտերկրներում հանգրվանած մեր միլիոնավոր հայրենակիցները: ՀՀ մշտական բնակչիս, որը վերջին տարիներին շաբաթներ ձգվող ժամանակահատվածներով եղել է ԱՄՆ-ում և Եվրոպայում, ասել է թե հանդիպել է մեր հայրենակիցներին ու լսել նրանց , մտահոգում է ոչ այնքան յուրօրինակ արտահայտվելու ցանկությունը, որքան արտահայտչաձևը. ինչքանո՞վ են տեղին «երկրում մարդ չի մնա», բանակի խնդիրներ կունենանք, և համանման կարծիքները: Իհարկե, այսօրվա Հայաստանն այն բնակատեղին չէ, որը 10-12 մլն հայերից յուաքանչյուրը պատրաստ է իր հանգրվանը համարել, ուր իրեն հանգիստ ու ապահով կզգա: Բայց ընդունենք նաև, որ միայն այսօրվա Հայաստանում է, որ լիարժեք հայկական կյանք կա, մշակութային ու մարզական, կրթական ու գիտական միջավայր է ստեղծվում, ակնթարթը հայկականությամբ է շնչում: Եվ հանկարծ, արբանյակային հեռուստատեսությամբ, ճոխ սեղաններիառջևհայաստանյանհաղորդումներ ու բանավեճեր դիտող մեր հայրենակիցը լսում է, թե մենք ոչ միայն փոքր ազգ ու երկիր ենք, այլև աղքատ է մեր ընդերքը և նման բաներ: Ի՞նչ մտածի նա: Հավանաբար նման մի պահի է մերօրյա Չինաստանի վերափոխիչ Դեն Սյաոպինն ասել, թե քամի փչելու պարագայում ոչ թե պատ շարելու մասին է պետք մտածել, այլ հողմակներ տեղադրելու:Կենսափորձս իրավունք է տալիսնշելու, որ ներկա Հայաստանի հիմնախնդիրները յուրօրինակ ձևով բարձրաձայնելու մեջ հատկապես առանձնանում են որոշակի ոլորտներում հաստատվելու փորձ անողները, որոնց թվում են նաև լրագրության ներկայացուցիչներ: Նրանցից մեկն, օրինակ, որը եռատոնի առթիվ բանավեճային հաղորդում էր վարում, մշտապես հիշեցնում էր, որ հայերս արցախյան պատերազմում մեզ տասնապատիկ գերազանցող հակառակորդին հաղթեցին մեր բարոյականության ուժով, որն արտագաղթի ներկա պայմաններում հնարավոր չէ պահպանել: Թե ինչքանով է արդարացված նման մոտեցումը, փորձենք ներկայացնել փաստերի օգնությամբ, բնավ չմոռանալով արտագաղթը ժամ առաջ կանխելու հրամայականը:

1980-ականների վերջերին Ադրբեջանի բնակչությունը 5,5 մլն էր, որից 500-հազարական ռուսներին ու հայերին և մյուս այլազգիներին հանելուց հետո ազերի էին միայն 4 մլն-ը: Հայերս տարածաշրջանում, որտեղից բազմաբնույթ մասնակցություն ապահովվեց, 4,5 մլն էինք: Վստահ եմ, առավել նպաստավոր դիրքի առումով սա է անհրաժեշտ փաստարկել, քանզի ինչքան էլ մեր դեմ հոխորտացողներն իրենց ինչ-ինչ գործառույթները նշեն, տարածաշրջանում հայկական գործոնը շարունակում է ազդեցիկ մնալ, թե՛ ֆինանսական, թե՛ մարդկային, թե՛ համակրանքի ու վստահության առումներով հայերս բավարար ներուժ ունենք, և մեր դեմ իրոք խաղ չկա: Այնպես որ ոմանց խուճապայինի մոտեցող տրամադրությունները հարկ է զուգահեռել այլ գործոնների վրա հիմնված իրողությունները փաստարկելով:

Հաճախ է արծարծվում ընդերքի հարցը, որակվում մեր խնդրահարույց տնտեսության կայացման հիմնական խոչընդոտներից մեկը: Կարծես դիտավորյալ չի նշվում, որ նավթ ու գազով հարուստ չեն նաև մեր մոլորակի 100-ից ավելի համեմատաբար բարվոք կենցաղ ունեցող երկրները, հենց թեկուզ Եվրոպան, որի մասնակի անդամ է Հայաստանը: Տարօրինակորեն չի փաստվում, որ այդ նավթն ու գազն ունեցող երկրներն էլ կախված են հզոր տնտեսություն ունեցողներից, ուր էներգակիրներին այլընտրանք է փնտրվում: Հյուրընկալ Ավստրիան էլ է օգտվում ռուսական գազից, որի տեսակարար կշիռը 1 բնակչի հաշվով 8000 կվտ.ժամ տարեկան ցուցանիշի մեջ անհանգստացնող չէ: Ինչո՞ւ, որովհետև Ավստրիայում գործում են տանիքներին տեղադրված տասնյակ հազարավոր արևային ջրատաքացուցիչներ, էլեկտրաէներգիա են արտադրում երկրով մեկ սփռված հողմակները, ավտոբուսներն աշխատում են «բիոէներգիա» կոչվող վառելիքով, տները տաքացվում են ընդերքի տաք ջրերի օգնությամբ… Երկրաստեղծ այս ոլորտում գործելու փոխարեն մեզանում ընդունված է Հայաստանը էլեկտրաէներգետիկ առումով ինքնաբավ համարել, երբ ներկրվող էներգակիրների միջոցով աշխատող առկա բոլոր էներգահզորություններն առավելագույն ձևով շահագործելու պարագայում 1 բնակչի հաշվով հազիվ 3000 կվտ.ժամ հոսանք կարելի է ստանալ: Բավական է մի քանի արդյունաբերական հսկաներ աշխատեն, և մենք կենցաղում խնդիրներ կունենանք:

Եվ վերջում նշեմ, որ ՀՀ բնակչության 2050 թվականի կանխատեսվող թվի մասին: Ըստ ԱՄՆ-ում լույս տեսնող «Համաշխարհային փաստեր. 2013» տեղեկատուի, որտեղ օգտագործվել են ոլորտի միջազգային 6 կազմակերպությունների վերլուծությունները, ՀՀ բնակչության առումով նշված է 3 մլն մարդ: Թերևս այս քանակին մոտ կլինի նաև մեր հայրենակիցների թիվը մերձակա երկրներում: Արժե ուշադրություն դարձնել նաև տեղեկատուի մի հրապարակմանը, մերկայումս հայերեն խոսում է աշխարհի 30 երկրներում ապրող 6 մլն հայեր, երբ ազերիների դեպքում թվերը համապատասխանաբար 10 երկիր և 7 մլն են:

Նորանկախ Հայաստանում խնդիրներն անշուշտ շատ են, սպասվածից առավել շատ: Մենք պարտադրված ենք դրանք լուծել, ինչքան էլ վիճակն անհանգստացնող ու խուճապային լինի:

Գեղամ Քյուրումյան